ՔԱՋԱՍԻՐՏ ԹԱԳԱՒՈՐԸ

(Շար. տես. 1920 թվ. էջ 50).

Տիտոս Լիվիոսի, իւր Հռոմէական պատմութեան մէջ, հիւսած շատ մը առասպելաբանութիւնները՝ արդէն առակի կարգն անցած են. անոնցէն մէկն է Արտաւազդի դաւաճանութեան առեղծուածն, զոր դարերու ընթացքի հետ, ուշնագոյն անգամ պատմագիրք, ընդուներ և աւանդեր են իրենց երկասիրութեանց մէջ։ Սակայն անոնք մեր հայրենասիրական զգացմունքը ունեցած չեն, մանրակրկիտ ուսումնասիրելու հին աղբիւրներն, որոնք եթէ մեզի պէս քննադատութեան ենթարկեն և լուսաբանեն նոյն բանը, կը հաւատամ թէ անոնք ալ մեր կարծեաց հաւանին և գան այն եզրակացութիւնը թէ՝ Արտաւազդին ընծայուած դաւաճանութիւնն՝ Անտոնիոսի ընկերացող Դիլլոսի և նմանեաց կեղծիքն է. Դիլլոսի՝ որ Արտաւազդի մտերիմ բարեկամն էր և Անտոնիոսի ձեռքին մէջ գործիք մը դարձաւ յետոյ խաբելու և կալանաւորելու զքաջասիրտ թագաւորը։ Պլուտարքոսէն յետոյ և աւելի մօտիկ ժամանակով, պատահած դէպքերուն՝ է Դիոն Կասսիոս, որ առանց կանխակալոյ կարծեաց, հակակրութեան կամ համակրութեան համարուած պատմագիր մ'է, որով և վկայութիւնն աւելի վստահելի. արդ սա ևս յայտնագոյնս և հաւաստագոյնս կը գրէ Անտոնիոսի դաւաճանութեան՝ զոհ գնացած Արտաւազդ, քան փոխադարձ՝ զոր կը ներկայացնէ իրրև հաւատարիմ դաշնակից Հռոմի ժողովրդեան և Հոկտաւիանոսի։ Սա ևս կարևոր փաստեր մեզ կ'ընձեռէ արդարացնելու զԱրտաւազդ, որովք յետոյ պիտի օգտուինք. սակայն հարկ կը համարինք յիշելու աստէն անոր մի հակիրճ բանը, որով կը հաստատէ նաև այն պարագան թէ Արտաւազդ ներկայ չէր Անտոնիոսի Եկբատանի պարիսպներու տակ կրած պարտութեանը, երբ Ցատիանոսի տասը հազարի բանակն և մարտական կազմածներն բնաջինջ եղան Պարթևներէն։ Դիոն կը գրէ. «Այս բարբարոսներն կարացին դիւրութեամբ առնել այս բանս, ՎԱՍՆ ՋԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐՆ ԲԱՑԱԿԱՑ ԷՐ ԱՑԴ ԿՈՒԻԷՆ, որ կրնար օգնել Հռոմայեցւոց (ինչպէս կ'ըսեն ոմանք) ոչ միայն չբրաւ զայն, ԱՅԼ ԵՒ ՈՉ ԱՆՏՈՆԻՈՍԻ ՄՕՏ ԳՆԱՑ և ընդ հակառակն դարձաւ յիւր թագաւորութիւն»։ — Ուրեմն Դիոնի խօսքերէն կը հակացուի, եթէ Արտաւազդ ներկայ լինէր՝ Հռոմայեցիք ապահով կը յաղթէին Պարթևաց, ընդհակառակն պատահեցաւ վասն զի բացակայ էր ոչ միայն կռուէն այլ և ոչ Անտոնիոսի մօտն գնացեր է զօրաժողովի ատեն. հետևապէս այն «դարձաւ յիւր թագաւորութիւն» հետևանք են անհարազատ գրութիւններուն, զոր ապացուցինք ներմուծուած Պլուտարքոսի բնագրին մէջ։ Այս բացակայութիւնն՝ որ անկարծելի կը թուէր Հռոմայեցւոց, կարծեցուցեր է թէ Արտաւազդ լքեր է ճակատն և դարձել յիւր թագաւորութիւն։

Բաւական և հաստատուն չենք համարիր դեռ ևս, մեր նախընթաց յօդուածի մէջ յառաջ բերած ապացուցութիւնը, որով հաստատեցինք նախ Արտաւազդի բացակայութիւնն և ճակատի դասալքութեան անտեղութիւնն և անկարելիութիւնը, ապա հերքեցինք Արտաւազդին վերագրուած դաւաճանութիւնն և ազնուաւոր մարտին մեծապէս պատճառ լինելը, մինչև որ ջախջախիչ փաստերով երևան չհանենք կեղծարար գրչի մը հետևեալ մեծահնչիւն վճիռը ևս. «Ուստի և քաջայայտ իսկ պատճառք եկաց Արտաւազդ Հայ, զի ի գլուխ զմարտն զայն չտարաւ Անտոնիոս»։

Թանկագին վկայութիւն մ'է սա հաստատեանց, որով կարմիր թելի պէս կ'որոշուին, յոյն բնագրի մէջ, եկամուտ և անհարազատ կտորներն, յորոց մէկն է այդ հատուածն ևս, սկսած. «Իսկ յետ հրաժարելոյն (181, մինչև էջ 182.) Այլ այսոքիկ պատահեցին»։ Արդ թէ այս և թէ միւս հատուածին մէջ, զոր յիշեցինք վերև (Պլ. էջ 158) յայտնի հակասութիւն կայ Արտաւազդի զօրքին թուի և տեսակի մէջ. առաջինը կ'ըսէ. «Ի ձեռս տայր նա Ան-

digitised by A.R.A.R.@

տոնիոսի վեց հազար այրուձիոյ և եօթն հազար հետեւակաց». — իսկ վերջինոյս մէջ, «Քանզի եթէ այն վեց հազար և բիւր մի այրուձիոյն՝ զոր առեալ ի բաց գնաց Արտաւազդ ի Մարաց աշխարհէն» — Այս երկու հատուածներու մէջն է ճիշտն կամ հարազատն։ Ըստ մեզ և ոչ մին. վասն զի եթէ Պլուտարքոսն լինէր հեղինակն, անշնդունելի է որ նոյն անձի և նոյն պարագաներուն վրայ գրած ժամանակ, մի քանի իլի տարբերութեամբ, այս հակասութիւնը գործէր։ Ուստի ճշմարիտն այն է, որ եթէ երբէք Արտաւազդ ուզեր նոր օգնել Հռոմայեցւոց, նոյն առաջարկն ինչ որ ըրած էր Կրասոսի, պիտի ընէր նաև Անտոնիոսի. այսինքն՝ վեց հազար ձիաւոր և երեսուն հազար հետեւակ. իսկ մնացածն ապացուցած ենք թէ անհարազատ ներմուծումներ են յոյն բնագրին մէջ։

Դառնալով արդ մեր նպատակին, որ է հակառակ վարձկան զրիչներուն, հաւաստել ոչ թէ Արտաւազդն պատճառ եղաւ Հռոմայեցւոց ձախորդութեան, այլ նոյն ինքն զօրավարն և պետն Անտոնիոս, որոյ հարիւր հազարի քանակն ահ և սարսափ ազդեր էր Բակտրիացւոց, Հնդկաց և բոլոր Ասիոյ։

Եւ զանազան են պատճառներն։ Մարկոս Անտոնիոսի համար կրնանք այն բանը ասել, ինչ որ Կիկերոն Բրուտոսի ճառի մէջ՝ ասած է Կրասոս Փոքրի համար թէ՝ «Վասն զի ծառայեալ էր ընդ ձեռամբ մեծի զօրագլխի — այն է կեսարու — ձեռնեբէց լինէր անդէն վաղվաղակի զօրագլուխ լինել և ինքն զօրու։ Ոչինչ ընդհանուր համարէր զանձն յՍղեքսանդրէ և ի Կիւրոսէ։ Մեծաքայլ վազս առեալ ի մեծութիւն և ի փառս, անկաւ գահավէժ յոտորմ կործանումն»։ Նոյնքան և աւելի մեծամտութեամբ բռնուած էր Անտոնիոս. կեսարու ձեռքի տակ մարզուած, մարմնոյ ուժի կողմանէ Հերակլէսի հաւասարը կարծէր զինքն։ Անտոնիոսի անհաշիւ առատաձեռնութեամբ խանդավառուած յոյներն՝ Աթէնքի մէջ սքանչացուցին իրրև նոր ոմն Բաքոս, որուն վիճակուած էր, հին դիւցազին պէս, աշխարհակալել Արևելքէն մինչև Հնդկաստան և աստուածական պատիւ ընդունել իւր հպատակներէն։ Աթենացւոց ընծայած պատիւներու ծուխովը ուռած և կեսարու արագ յաղթութեանց յիշատակներով գինովցած, խոյացաւ դէպ ի Ասորիք, ձեռնարկելու Պարթևաց արշաւանքին, որոյ կը նպաստէին Օգոստոսի բարեացակամութիւնը, Հոկտաւիայի նուիրած զօրքերն, նաւերն և պատերազմի մնացած պիտոյքներն։ Պիտակ Ալանի մէջ կը գտնէ զՄոնէսիս փախստական Պարսիկ նախարարն, նոր Թեմիստոկղէսի մը առաջարկութեանց և խորհուրդներուն կը հաւանի, և ամենայն զաղտնութեամբ պատերազմի պատրաստութիւնները կը տեսնէ անոր կազմած ծրագրով յարձակելու Պարթևաց վրայ։ Բայց Մոնէսիս իւր թագաւորէն յետ կը կոչուի և հետը կը տանի Անտոնիոսի երազներն, ծրագիրները, և երկդիմի հաշտութեան մը նախապատրաստութիւնն։ Անտոնիոս ինքզինքը աւելի խորամիտ կարծելով կը խաբուի Պարթևէն։ Նա, այո՛ հաշտութեան բանաձնացութեան կը մտնէ Պարթևաց հետ, սակայն Մոնէսիս կը տեղեկացնէ զՊարթևներն զգուշանալու կեղակարծ և անհաւատարիմ բարեկամէ մը և պատրաստ մնալու դաւաճանօրէն յարձակման մը։

Անտոնիոս ապահով իւր լարած թակարդի յաջողութեան վրայ, կը թողու պատերազմի հին ծրագիրներն և Հայոց աշխարհն և Արտաւազդը ու իւր տասն և վեց հազար հեծեալներն։ Դարձեալ կեսարու կայծակնաթափ յաղթութեան ուրուականը կը պատկերանայ մտքին մէջ. սակայն կը մոռնայ թէ կեսար, յառաջ քան երագելն՝ կը կարգադրէր միջոցներն առ նպատակն և կը դասաւորէր իւր ռազմական ծրագիրներն օղաշար դէպ ի անշուշտ յաղթութիւն։ Իսկ Անտոնիոս զուրկ էր մեծ զօրավարի մը յատուկ բարեմասնութիւններէն։ Նա խկզբան, ինչպէս ասացինք, մեծ զօրավարի հռչակ ստացեր էր կեսարու ստուերի տակ կռուելով. իսկ երբ Արևելքի բաժինն առաւ, բոլոր մեծամեծ յաղթութիւններն, որ կապուած են իւր կեանքի

digitised by A.R.A.R.@

և գործոցը հետ, կատարեր են իւր հանճարեղ տեղակալ զօրավարները։ Երկու մեծ կռուի՝ ինքն ուզեց անձամբ զօրավարել, երկուքն ալ պարտութեամբ վերջացան. մէկը Պարթեւաց պատերազմն զոր կ'ուսումնասիրենք, միւսն Ակտիոնինը որ մեր խնդրէն դուրս է։ Երկու ճակատամարտի մէջն ալ նոյն տարտամ, դեղեկոտ, մտակորոյս, անվճռական և թուլասիրտ մարդն է, անկարող հրամայելու մեծ բանակի մը, որ կրնայ ազգի մը բաղդը ապահովել վերջնական յաղթութեամբ։ Անտոնիոս Սիրիոյ մէջ ժողոված էր այնպիսի բանակ մը որու նմանը ոչ միայն Ասիա տեսած չէր, այլ նաև Հռոմ։ Ուստի Հռոմայեցի պատմիչներն փոխանակ Հայոց թագաւորը ճնշապարտ հանելու Անտոնիոսի ձախող արշաւանքին, լաւ կը լինէր եթէ մանր միտ դրած լինէին Պլուտարքոսի բնագրին, կամ թէ կ'ուզեն այժմ մեզ հետ ընկերին վերլուծելու զայն՝ յորմէ դուրս պիտի ցատկէ բացորոշ կերպով թէ ո՞վ է իսկական յանցաւորն և Հռոմէական ժողովրդի դատաճանողն։

Երևակայենք պահ մը մեր առջևը տոնուած Անտոնիոսի հարիւր հազարի բանակն. դիտենք «այնպէս գեղեցիկ դասաւորութեամբ խաղալ Հռոմայեցւոց, տեսիլ սքանչելի ի ներքս բերէր Պարթեւաց, որ անդանօր կարգեալ վառեալ մօտ կային, հիացեալք ընդ միաչափ անջրպետել խաղալ գնդաց գնդաց նոցա՝ միաբան անշրջունչք հարեալք ճաճեալք զգեղարդունս»։ Մենք ևս մտքով ոչ պակաս քան զՊարթեւներն կը հիանանք ռազմական արուեստին մարզուած կուռ սպառազէն բանակի չուելուն վրայ. բայց մինչև ուր պիտի գնան այսպէս, աւաղ յաղթութեան յուսով մեկնած, պարտութեամբ կորակոր յետ պիտի դառնան իրենց զօրավարի անգիտութեան երեսէն։ Մենք չենք գայս ասողն անխորհրդարար, այլ նոյն ինքն Պլուտարքոս։

Ուշիմ ընթերցողի առջև կը պարզենք ամբողջ բնագիրն, յորմէ կարէ խելամուտ լինել ճշմարտութեան, առանց իսկ մեր առանձին լուսաբանութեանց։

«Այլ կազմութիւն այնչափ հանդերձանացն և ստուարութիւն բանակացն, յորմէ և Հնդիկք ինքնին յայնկոյս Պակտրիացւոց՝ զարհուրեցան և Ասիա ողջոյն սասանեցաւ, ասեն՝ եթէ բնաւ իսկ անպիտան յարդրեցաւ Անտոնիոսի ի պատճառս Կղէոպատրայ։

Փանզի կանխեալ աճապարեալ ինքն ի գործ անդր՝ զի ապա երթեալ ձմերեսցէ ընդ նմա, մարտ մղեաց կանուխ քան զժամանակն. և անկարգութեամբ և աղմկաւ առաջնորդեալ, ոչինչ առաքինացաւ ողջախոհ մտածութեամբ. այլ խելաթափ իրրու ի դեղատուութենէ իմեքէ կամ ի բժժանաց ոմանց կախարդեալ այրն՝ անքթիթ ակնկառոյց ի սիրուհի անդր, քան թշնամեացն յաղթել՝ փութայր ճեպէր մանաւանդ զդարձն առնել։ Փանզի և առաջին պարտ իսկ էր նմա անդէն ի ձմերոցի կալ յաշխարհին Հայոց. և զօրուն հանգիստ տալ լքելոյն և պարտասելոյ՝ զի ութ հազար ասպարիսաց հատեալ էր նոցա. և ապա ի գլուխ զարնայնոյն՝ մինչչև Պարթեւաց ի ձմերոցացն ելեալ՝ դիմել ի Մարս. բայց նա ոչինչ հանդարտեցաւ, և խաղայր յառաջ՝ թոդեալ յահեկէ զՀայոց աշխարհն. և հասեալ յԱտրոպատէն, աւար հարկանէր զգաւառն»։

Ահա թէ ինչպէս մենք հասկացած ենք Պլուտարքոսի բանի միտքը։ Անտոնիոս երկու բանի սէր ունէր. շուտով յաղթել, և փութով դարձ առնել առ Կլէոպատրայ։ Շուտով յաղթելու համար՝ բաւական համարեցաւ Մոնէսիս հաշտութեան պատգամաւոր զրկել առ Փրառոտէս, զբաղեցնելու և խաբելու յուսով, մինչ ինքն զօրն կեսարու՝ կայծակնօրէն յանպատրաստից պիտի խոյանար Պարթեւներու վրայ և իրրև թռչնոց երամ ցան և ցիր կոխոտէր իւր յաղթական ոտից տակ, ուստի՝ ՄԱՐՏ ՄՂԵԱՑ ԿԱՆՈՒԻՒ ՔԱՆ ԶԺԱՄԱՆԱԿՆ։ Ռազմագէտ զօրավարի մը հարցնելու է այս սխալի ճնաներն։ Իսկ մենք ասած ենք, ասով Աստուածդ, որ կրնար օգնել Հռոմայեցւոց, ժամանակ չունեցաւ Անտոնիոսի մօտ գնալու։ Ուրեմն նախամտածուած

digitised by A.R.A.R.@

ծրագրի զանցառութիւնն, հարկաւ հե. տևանք կ'ունենայ աղմուկ և շփոթութիւն, և ահա «անկարգութեամբ և աղմկաւ ա. սաչնորդեալ»։ Փութկոտն և անկարգն ոչ իւր օգտակարը կը մտածէ և ոչ վտանգնե. ը կը նախատեսէ. ահա «ոչինչ առաքինա. ցաւ ողջախոհ մտածութեամբ» — Զօրավար մը որոյ ուշքն ու միտքն իւր բանակէն և զօրքէն հեռուներ կը թափառի, աչքը դէպի ետև կը նայի քան առաջն, նա կոյրի մը պէս կը գնայ, նա չի տեսներ իւր թշնա. մին, չի զգուշանար. թշնամւոյն յաղթելու ապահով ճանապարհն է՝ թշնամւոյ ոյժը գիտ. նալ և սխալներէն օգտուիլ կամ ռազմա. գիտական սխալներ գործել տալ։ Բայց Ան. տոնիոս կուրացած կլէոպատրայի սիրով «անքթիթ ակնկառոյց ի սիրուհի անդր», զրկուած զօրավարի մը հարկաւոր կա. տարեալ գիտութենէն, «քան թշնամացն յաղթել՝ փութայր ճեպէր մանաւանդ զդար. ձրն առնել»։ Ո՞վ լինէր Արտաւազդի տեղ, եթէ գտնուէր Անտոնիոսի մօտ, որ այսպիսի խելաթափ զօրավարի մը հրամանի տակ, կամ իբր նիզակակից երթար կռուելու և չթողուր ի բաց գնար անկարգ և աղմկալից բանակի միջէն։ Պլուտարքոսի խորհրդա. ծութիւններն թերի պիտի մնային, եթէ նա ցոյց չտար աւելի գործնական և ապահով միջոցները ապահովելու յաղթութիւնը. միջոցներ՝ որ կը ծանրացնեն մեծապէս Անտոնիոսի պատասխանատուութիւնը և կ'արդարացնեն Արտաւազդի բռնած դիրքը հանդէպ երկու հզօր թշնամիներուն, որոց հետ ինքը բարեկամութեամբ էր։

Անտոնիոսի համար կը գրէ. «Ֆանզի և ԱՌԱՋԻՆ պարտ իսկ էր նմա անդէն ի ձմերոցի կալ յաշխարհին Հայոց. ինչպէս որոշուած էր զոգ մի տարի առաջ Սամու. սատի դաշնադրութեամբ, և «ապա ի գլուխ գարնանայն՝ մինչչև Պարթևաց ի ձմերո. ցացն ելեալ՝ դիմել ի Մարս» — որ կը հասկացուի Այրարատեան ձմերոցներէն և կրկին ճանապարհով, ըստ մեզ՝ Բաքևան. դէն և վասպուրական աշխարհէն պիտի անցնէին Ատրպատական։ Պլուտարքոս որ կը հասկանար Անտոնիոսի գործած ան. ներելի սխալները, չի գիտեր ինչպէս բա. ցատրել այսպիսի տարօրինակ եղելութիւն մը, կը համարի զնա «խելաթափ իբրու ի դեղատուութենէ խմեալ կամ ի բժժանաց ոմանց կախարդեալ այրն»։ — Այդ խելա. թափութիւնն և բժժանք ու կախարդու. թիւնը, հետևանք էին առ Կլէոպատրայ ունեցած սիրոյն, որով «կանխեալ ամապա. դեալ ինքն ի գործ անդր՝ զի ապա երթեալ ձմերեսցէ ընդ նմա»։ Պլուտարքոսի այս մէկ դրուագն կը ՇՆՉէ միանգամայն ամե. նայն կեղտ և ամբաստանութիւն զոր Ան. տոնիոսի հացկատակ պատմիչներն յերիւ. րեցին և բարդեցին Արտաւազդի վրայ, որպէս զի Հռոմի ժողովուրդի և ծերա. կոյտի ատելութեան և արհամարհութեան չենթարկուի։

Անտոնիոսի երկրորդ սխալն եղաւ, ինչ. պէս նախընթացապէս յիշեցինք, Սպիտակ Լանէն, Միջագետքի անապատներէն տա. նել բանակը։ Նա համարելով որ Պարթև. ներն Մոնէսիսի միջոցաւ եղած դաշնախօ. սութեամբ անպատրաստ կը մնան պատե. բազմի, մտածեց համաոստել ճանապարհն յանկարծակիի բերելու համար։ Ուստի Դամասկոսէն «իսաղայր յառաջ՝ թողեալ յահնկէ զՀայոց աշխարհն» գնաց նա կա. բաւանի ճանապարհով դէպ ի Բաբելոն մինչև Սելևկիայ իբր թէ ձմերելու նպա. տակով, ինչպէս կ'ուզէր խաբել Եփրատի ափերը պաշտպանող Պարսից պահակներն։ Այն տեղ լուր կ'առնէ թէ՝ Մարաց թա. գաւորն գնացեր է առ Պարթև. պատեհ առնելով թագաւորի բացակայութիւնն, ան. գլուխ և անառաջնորդ ժողովրդեան վրայ կը յարձակի «և հասեալ Ատրոպատէն աւար հարկանէր զգաւառն»։

Երրորդ սխալն է, որ Անտոնիոս յետ այնչափ ճամբայ կտրելու, փոխանակ հան. գիստ տալու զօրքին, ընդհակառակն իւր դարձը առ Կլէոպատրայ ճեպելու համար, պատերազմական գործողութիւնները կը սկսի, փոխանակ զի «պարտ էր նմա և զօրուն հանգիստ տալ լքելոյն և պարտա. սելոյ՝ զի ութ հազար ասպարիսաց հա. տեալ էր նոցա»։

digitised by A.R.A.R.@

Զորրորդ սխալն և աղիտաւորն և աննեղելին մեծ կամ փոքր զօրավարի մը, այն եղաւ, որ միշտ «աճապարելուն, ճեպելուն, փութալուն համար ի ԴԱՐՁՆ! Անտոնիոս իւր վերջապահ բանակն և երեք հարիւր բեռնաբարձ սայլերն, պաշարման պատրաստի գործիքներով, յետ կը թողուր կեսարու ոճով, միայն թեթեւագէն զօրքով յառաջ կ'անցնի ինկնալու թշնամեաց վրայ. բայց կը խարուի իւր հաշուի և նմանութեան մէջ. վասն զի Պարթևներն, անշուշտ նոյն Մոնէսէսի թելադրութեամբ, գուշակելով Հռոմէացի զօրավարի բռնած երկդիմի ընթացքը, կանխէն պատրաստեր ամրացուցեր էին իրենց քաղաքներն, մանաւանդ Եկբատանը, որ առաջին յարձակման թափն պիտի ընդունէր։ Արդարև նա գնաց պաշարեց մեծ քաղաքը, և հոն «արագ խելամուտ վրիպակին լինէր Անտոնիոս»։ Շատ ուշ էր. Պարթևներն կոտորեր էին Ցատիանոսի տասը հազարի բանակն և տիրացեր էին բոլոր պատերազմական կահուց և կազմածոց։ Անտոնիոսի կը մնար այնուհետև՝ նահանջել. վասն զի բանակի կարևոր մասը կորցնելէն յետոյ «առ դուրս հասեալ կայր սոնձ»։

Յետ պատկերելու Անտոնիոսի ռազմայարդարութեան ամեն վնասակար և կործանիչ հետևանքները, որով անհրաժեշտօրեն պիտի ձախողէր Հռոմէական արշաւանքը, ով պիտի համարձակի դեռ պնդել թէ «պատճառը մեծապէս եկաց Արտաւազդ ձախող ելից արշաւանին» — Ոչ ոք կարծեմ ի միտս ունեցաց։ Արդարև, յետ կորսնցնելուն անգամ պատերազմի կահ և կազմածն, (և առասպելեալ դասալքութեան Արտաւազդի) Անտոնիոսի բանակն դեռ այնքան զօրութիւն ունէր որ կրնար խորտակել զՊարթևներն եթէ ուներեցած լինէր իսկական Հռոմայեցւոյ հաստատամտութիւնը։ Կռուելու ստիպուած Եկբատանի մօտերն, երկիցս մղեց Պարթևաց յարձակումն և կը համարէր թէ տարած է կատարեալ յաղթութիւն. այլ ու

գաւորէ մը, որ իւր աթոռի վրայ էր և իւր երկրի մէջ։ Բայց ծիծաղական է այս առարկութիւնը, վերև յիշած պարագաներու համար։ Մանաւանդ թէ ինչպէս կը զրէ նաև Ռոլէն. «Ո՛ ապահովել զայն, ոչ ինչ դիպողագոյն էր Անտոնիոսի՝ բայց ժմերել ի Հայաստան աշխարհ, որով վիճակէր նմա ևս նորոգել զպատերազմ ընդդէմ Պարթևաց» Այն ատեն Արտաւազդ իւր զօրքերով ուզէր չուզէր պիտի օգնէր Անտոնիոսի, որով անշուշտ կը յաղթէին Պարթևաց. հետևապէս Անտոնիոսի ձեռքերն ազատ մնալով՝ կրնար համարձակութեամբ կալանաւորել իւր բարեկամն և նիզակակից։ Ինչո՞ւ ուրեմն չբրաւ այդ բանը, ինչ որ տրամաբանօրէն այսօր մենք և ուրիշներն կ'իմաստասիրենք. անոր համար որ Արտաւազդի կողմէն ոչ երբէք տեղի ունեցած է դաւաճանութիւն, ո՛չ դասալքութիւն։ Հռոմէական զօրքը, սպայք, զօրականք լալով և տրտմութեամբ մեկնած են անշուշտ երջանիկ աշխարհէն, երախտապարտ մնալով առ բարեբար թագաւորն և հիւրասէր Հայ ազգը, և անոնց մտքէն երբէք անցած չէ գրգռութիւն, ոչ քինախնդրութիւն Հայոց թագաւորի դէմ, որ իրենց և Անտոնիոսի կեանքը փրկեց Պարթևներու նետերէն, որոնք յարգելով Հայոց բարեկամութիւնն այլ ևս չուզեցին հետապնդել. կասկածելով միանգամայն թէ Արտաւազդ կրնար զէնքով միջամտել, որով կը կորցնէին իրենց բոլոր վաստակած օգուտներն։

Ընդհակառակն եթէ հաւատանք Հռոմայեցի պատմիչներուն և ընդունինք թէ՝ Անտոնիոսի և Արտաւազդի միջև տեղի ունեցած ըլլար գժտութիւն և թշնամութիւն, այն պարագային՝ միայն Հռոմայեցի զօրքը չէր որ քրիստոնեայ և վրիժառու պիտի ըլլար Հայոց դէմ, այլ Հայերն ալ իրենց կողմէն, հաւասարապէս Արտաւազդի և իւր սպայից և զօրականաց հետ՝ նոյն վրէժխնդրութեան հոգին պիտի տածէին դէպ ի Հռոմայեցիք, որով անոնք Եկբատանի մօտերէն չպիտի ուզէին Հայաստան երթալ, երկու տարի մէջ չինկնալու համար, այլ իրենց ուզած ցամաք և անմայրի ճանապարհով յետ պիտի դառնային։ Իսկ եթէ թերևասով մը գնացին, ի՞նչ ապահովութիւն կրնային ունենալ խուսափելու Հայոց վրէժխնդրութենէն, երբ տառապանքէ և աշխատութենէ յոգնած լքած զօրքերն, անցնելու ըլլային Հայ հողի վրայ։ Եթէ Պարթևներէն հալածուած կ'անցնին Երասխ, նոքա աներկմիտ կը հաւատային և կը յուսային բարեկամ թագաւորի օգնութեան և պաշտպանութեան վրայ. և չխաբուեցան ինչպէս տեսանք յառաջ։

Թէ Անտոնիոսի կարմտութիւնն և մոլեգին ցանկութիւնն եղած է իւր կործանման պատճառն, յայտնի է անկից որ նա Հայաստանի մէջ գտաւ ժմերոցներ, առատ պաշար և մեծաքանակ դրամ և չուզեց մնալ Հայաստան. այլ դժնդակ եղանակին, ձիւնին և բուքին, նա իւր զօրքով համբայ ինկաւ Սիրիա գնալու. Արտաւազդ գուզամ հանել կու տայ ճանապարհները հարթելու, այնուհանդերձ Անտոնիոս «անցուցեալ ընդ ձիւնաբերս և ընդ սառնամանիս» ի զուր, տարապարտուց կը կորսնցնէ այլ ևս ութ հազար հոգի ևս։

Անտոնիոս բովանդակ արշաւանքի և կռիւներու մէջ կորուցեր էր 20 հազար հետևակ և չորս հազար հեծեալ, մինչև Երասխ անցնելն այս կողմ. և այս մեռածներու կէսն՝ ոչ սրով, այլ հիւանդութեամբ պակսեր էին։ Մինչդեռ բարեկամ երկրէ, հարսանիքի մը նման յուզարկաւորութեամբ անցած ժամանակ, ութ հազար հոգի ևս կը կորսնցնէ։ Արդեօք այս ձախողութեանն ալ պատճառը Արտաւազդ Հայն եղած է. թողունք Հռոմայեցի պատմիչներուն մտածելու հարցմանս տալիք պատասխանը։

Ոչ միայն Պլուտարքոսի գրածներով կը հաստատուին Անտոնիոսի վրայ բարդուած մեղադրութիւնները, թէ ինքն մեծապէս պատճառ եղաւ արշաւանքի ձախորդ երթալուն, այլ նաև Դիոն Կասսիոս հանգամանօրէն կը պատմէ այն կեղծ և ստապատիր միջոցները որուն դիմեց Անտոնիոս՝ ճշմարտութիւնը ծածկելու և

digitised by A.R.A.R.@

ամբաստանելու զԱրտաւազդ իբր դաւաճան։ կը սիրենք յառաջ բերել Ռուլէնի մի հատածն՝ որ ամփոփում մ'է Դիոնի զրածներուն, որ ըստ իւր կարգին հաւաքեր է ժամանակակից պատմիչներէ։

«Անտոնիոսի ապաքէն չկայր տեղի մնասարծութեան ընդ այս շահատակութիւն ընդդէմ Պարթևաց, բայց և այնպէս զրեաց նա Հռովմ յաղթական ոճով, առագաստեալ զկորուստս և բարդեալ զգուզնաքեայ առուելութիւնս. վասն այսորիկ արժանացաւ, զի մատենագիրք մտահաճք կեսարեանց պախարակեցին զնա, փոխանակ զի զիւր ՕԿԱՈՒՍՏ յաղթութիւն կոչեաց, և յաղթական զանձն համարեցաւ՝ զի պրծաւ ի ձեռաց թշնամեաց[1]։ Ոկտաւիանոս ՀԱՍՈՒ էր ԼԻՈՎ ԻՍԿՈՒԹԵԱՆ ԱՆՑԻՑ և փոյթ յանձին ունէր իրազեկ լինել այնց։ Բայց ստիպեալ շուք դնել Անտոնիոսի, մանաւանդ առ կենդանութեամբ Սեքստոսի Պոմպէոսի, զգուշացաւ չտեղ յայտնապէս զնոտիապարծ պատմութիւնս իւրոյ իշխանակցի։ Նա՝ զսորին հակառակն ետ հրաման հանել ի Ներակուտէն, զի գոհութիւնք մատուցին դից, և պատարագք մատչեցին իբր վասն բարեբաստիկ և պանծալի յաջողուածոց»։

Անտոնիոսի արշաւանքն Պարթևաց դէմ ծաղրատեղի եղած էր Հռոմի մէջ։ Հոկտաւիանոս թէ և Հռոմայական հմայքն չնսեմացնելու համար հանդէսներ կը սարքէր, սակայն երգիծանքներ անպակաս կը շրջէին բերնէ բերան Հռոմի մէջ, որոց հեղինակն գլխաւորապէս կը համարուէր ինքն Հոկտաւիանոս, ուստի Անտոնիոս ստստիկ վիրաւորուեր էր և ոխակալուեր էր անոր դէմ։ Բայց չկարենալով վրէժ հանել, իւր սրտի դառնութեան թոյնը և քինախնդրութիւնը դարձուց Օգոստոսի կողմի մարդոց դէմ, որոց առաջինն Արտաւազդն էր՝ դաշնակիցն և բարեկամն։ Եւ Աղեքսանդրիոյ մէջ առաջին անգամ զԱրտաւազդ կալանաւորելու որոշումն կ'ելլայ. և հոն՝ Անտոնիոսի հաւատարժութիւնն և դաւաճանութիւնը ծածկելու համար, Արտաւազդի հակառը լքելուն առասպելը կը դարբնուի. փաստերն յաջորդ յօդուածով։

(Գիրքը միւս անգամ) ՄԵԼՈՒ ՇԵՐԱԿԱՆ

---

1. Զայս փախուստ իւր Անտոնիոս վասն անմեղապուր հողդարելոյն՝ յաղթութիւն առ ժայնէր։ Վէրկէյոս գիրք Բ. Գլ. ՁԲ.

Անկարծելի թիւն խօթամտութեամբ յոխորտագոյնս ցուցաւ, որպէս թէ յաղթող գաւառ որ մագապուրն էր հողդարելոյ։ Փլորոս. Գ. Ժ.

ԱՐՁԱՆԱՐՆԱԿ ՍԱՐԳԸ

Խորհրդաւոր սարդն ինծի այսպէս ըսաւ. «Ե՛ս մէյմի՝ կը լլսեմ երգը մարմար արձաններուն, դիւերուան Աբեթեղէն մաժերուն, երբ լուսընկան կը վեսէ Գանդակներուն չուրջ՝ ասկի նէնուֆարներ Երապէ։ Հոն, դրան քովիկ, մենաւոր տուս մը զանկը պղնձակայ Բոլոն է ուր ես կը քնակիմ առանձնարէն հոգեմայ։ Երբ ամբոխները կու գան, ես ապրշումն կ'ելլրեմ Ցօրինելով զարանաքար տունն իմ կեանքիս լուսեղէն, Եւ արեւին զարդ համբոյրն իմ սրտիս մէջ ըզգալով Ես դիւերուան կը սպասեմ կախարդանքէն իր զինով... Այն տան իմն է բոլոր շքեղ սրբուն Աբուսատին Ուր սատուածներ, քերթողներ եղբայրօրէն կը ժպտին։ Օրօրուելով մեսաքանչ յակուրջին մէջ իմ թելիս կ'անցնիմ փառքէ փառք, անա թելուն ի՞նչպէս կ'տուն[նէ զիս Ու կը տանի բոցավառ չոգերուն մէջ լուսանկին՝ Գնարի մը կուրծքն ազբաթս ուր կը մնամ թրթռազին... Ու կը լլսեմ հոգեմայլ՝ զեղեցկութեան քանդակուած Անհուն երգերը մարմար և շքեղութիւններ մեռած Անդրիներուն կը բացուին, և համբոյրներ անսահման Հոգիս մէջ կը ծագին և իրենց վիշտը կու լան... Բայց երբ արեւը ծագի, արդէն հասած կ'ելլամ ես Հոն, դրան մտիկ, մենաւոր պղինձէ զանկին մէջ, թելէս Ապրշումէ կարժերով լուսեղէն տունը կեանքիս Արեւազա՞ծ կը հեսեմ հոն քանաեելով իմ հոգիս...

(Musée de Luxembourg ի մէջ) Բարիզ
«Ցնորականները» ԱՐՍԷՆ-ԵՐԿԱՆ

digitised by A.R.A.R.@